**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1**
**№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

**ք. Երևան** **13.03.2020թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Եսայանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **17.12.2019թ**. կնքված **№ ԳՀԱՊՁԲ-20-10/5-1** գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված № 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին(այսուհետև՝ Ստացող) մատակարարել՝ Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն № 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ **հավելված N 2-ով**, նախատեսված ժամանակահատվածում:

**2. Գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է **4,036,200 (չորս միլիոն երեսունվեց հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն**, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի **3.3** կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան **10.12.2020թ.**:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 3 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում **ՀՀ ՊՆ ԿԾ և ԱԲ վարչությունը:**

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | «Մեծ Ծիածան» ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ՀՀ, ք. Երևան, Վ. Համբարձումյան 91 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | «Ամերիա Բանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 1570017805580100 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00103837 |
| ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ | տնօրեն |
| Ն. ՅՈԼՅԱՆ | Գ. ԵՍԱՅԱՆ |

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Ապրանքի անվանում | Չ/Մ | Քանակ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/ | Մատակարարումը՝ 2020թ |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | 2-րդ եռամսյակ |
| 1. | Հատիչներ (Եռաֆազ հատիչ 100Ա) | հատ | 20 | 19,900 | 398,000 | 20 |
| 2. | Հատիչներ (Եռաֆազ հատիչ 250Ա) | հատ | 20 | 28,700 | 574,000 | 20 |
| 7. | Ավտոմատ անջատիչներ (Էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 50Ա) | հատ | 500 | 640 | 320,000 | 500 |
| 28. | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (Էլեկտրական անջատիչ միաբևեռ, արտաքին մոնտաժի) | հատ | 1,000 | 299 | 299,000 | 1,000 |
| 39. | Տնտեսող լամպեր (Լուսադիոդային լամպ E-27, 25վտ) | հատ | 1,000 | 1,680 | 1,680,000 | 1,000 |
| 40. | Լամպ գնդաձև, շիկացման թելիկով, 60 Վտ, E-27, 36 Վ | հատ | 500 | 190 | 95,000 | 500 |
| 41. | Լամպերի կոթառներ (Լյումինիսցենտային լամպերի բնիկներ, 18վտ, 36վտ) | հատ | 3,000 | 155 | 465,000 | 3,000 |
| 47. | Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Հոսանքի տրանսֆորմատոր 100/5) | հատ | 30 | 3,340 | 100,200 | 30 |
| 48. | Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Հոսանքի տրանսֆորմատոր 200/5) | հատ | 15 | 3,500 | 52,500 | 15 |
| 49. | Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Հոսանքի տրանսֆորմատոր 300/5) | հատ | 15 | 3,500 | 52,500 | 15 |

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Ն. ՅՈՒԼՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մեծ Ծիածան» ՍՊԸ
տնօրեն

Գ. ԵՍԱՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-20-10/5-1 պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Հ/հ | Ապրանքի անվանում | CPV կոդ | Ընդհանուր գին/դրամ/ | Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., համապատասխան ամիսների, այդ թվում | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս | Օգոստոս | Սեպտեմբեր | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ. |
| 1. | Հատիչներ (եռաֆազ հատիչ 100Ա) | 44511150/509 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 | 398,000 |
| 2. | Հատիչներ (եռաֆազ հատիչ 250Ա) | 44511150/510 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 | 574,000 |
| 7. | Ավտոմատ անջատիչներ (էլեկտրական միաֆազ ավտոմատ անջատիչ 50Ա) | 31211180/528 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 | 320,000 |
| 28. | Միացուցիչներ և կոնտակտային տարրեր (էլեկտրական անջատիչ միաբևեռ, արտաքին մոնտաժի) | 31221190/512 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 | 299,000 |
| 39. | Տնտեսող լամպեր (Լուսադիոդային լամպ E-27, 25վտ) | 31531300/513 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 | 1,680,000 |
| 40. | Լամպ գնդաձև, շիկացման թելիկով, 60 Վտ, E-27, 36 Վ | 31521290/503 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 | 95,000 |
| 41. | Լամպերի կոթառներ (Լյումինիսցենտային լամպերի բռնիչներ, 18վտ, 36վտ) | 31221180/506 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 | 465,000 |
| 47. | Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Հոսանքի տրանսֆորմատոր 100/5) | 31211340/512 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 | 100,200 |
| 48. | Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Հոսանքի տրանսֆորմատոր 200/5) | 31211340/513 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 |
| 49. | Էլեկտրաէներգիայի հոսանքափոխարկիչ (Հոսանքի տրանսֆորմատոր 300/5) | 31211340/514 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 | 52,500 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ Դեպարտամենտի պետ

Մ. ՅՈԼՉՅԱՆ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մեծ Ծիածան» ՍՊԸ
տնօրեն

Գ. ԵԳԱՅԱՆ